

## ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՀՈՄԵՐԱԿԱՆ ԲԱՌԴԻՐՔ ԵՒ ՀՈՄԵՐԱԿԱՆ ՏՈՂՔ

Չատոնց ծանօթ են ամենուն հայկական դպրութեան մէջ հոմերական անուամբ յիշատակուած տողեր, և նաև ամբողջական՝ բայց փոքր բառգիրք մ'ալ որ նոյն անուանի քերթողին անունը կը կրէ վրան։ Այլ ինչպէս ամենայն գիւտ 'ի սկզբան մեծ շառաչ կը հանէ, ու երբոր քննութեան մամլոյն տակ կը ձգուի՝ կը փոխէ ու մեզմէ իր առաջուան շառաչը, այսպէս և մեր կտոր կտոր պատառիկ ներն 'ի սկզբան մեծ յցս մը տուին հետախոյց մոտաց, մինչև կարծեցուցին ևս որ այն անմահական քերթողին կրկին յաւերժայիշատակ գործերը հայկական գրչէ մը անցած ըլլան, և եթէ ոչ սրբոյն Յահակայ կամ Մեսրոպայ կամ Մովսեսի խորենացոյն, գոնէ քիչ վերջը ճարտար և կորովի գրչէ մը։ Երանի թէ այս յոյսը առոյգ ըլլար, կամ մեզ ալ կարելի ըլլար այդպիսի բան մը կարծել։ Եւ որ ալ մեծագոյն է, այն հոչակեալ տողերն կարծեցրնել տուին որ հայկական լեզուն ալ կարու ըլլայ հելլենական տաղայափութեան գրութեամբ ամանակաւոր տողեր ըստեղծել երկայն ու սուզ վանկերով, որոնց երկարութիւնը կրնայ ըլլալ բնութեամբ կամ զրութեամբ, ինչպէս կը բացատրեն տաղայափական կանոնաց օրէնսդիրք։ Իրաւցնէ այդ երկու վերոյիշեալ կարծիքն իթէ հաստատոն և ճշմարիտ ըլլային, որչափ աւելի փայլ մը կ'առելնար հայկական դպրութեան։ Նախ անով որ մեծ քերթողահօր իլիհական և Ռիդիսական կոյուած գրութեամբք կը հարցստնար մատենագրութիւննիս քերթողական բառերով և բացատրութիւններով։ Վասն զի որչափ մեր նախնիքն, այն սրբազն վաստակասէրներն, աշխատեր են թարգմանելու սրբազն գրեանք, որոնք ժողովրդեան սիրտը կրթեն ու առ բարեպայտութիւն յորդորեն, այնչափ ալ 'ի հակառակէն ամենակին չեն մօտեցեր հեթանօսական զբերու և երգերու, որոնց գեղեցկութիւնն արդէն իրենք ալ շատ զգացեր էին, մանաւանդ անոնք որ աթենավարժ և հելլենախօս մտօք հնացած ու ծերացած իրենց հայրենիքը կը դառնային, բազում ու մեծագանձ աւարներով, որոնց մէջ միայն այն հեթանոսական կամ արտաքնոց գրեանքը կը պակսէն։ Եւ թէ որ ուզենանք վեր 'ի վերանց գաղափար մը մեզի ստեղծելու թէ արդեօք սուլիր Յահակ կամ Մովսէս Խորենացին ձեռքերնին առնուին թարգմանելու Հոմերոսի երկասիրութիւնքը՝ ինչ ճապուկ լեզու պիտի խաղցընէին, փոքր օրինակ մ'առնուկը հին գրքէ մը՝ որ պարզ հեթանոսական գրիչ է, բայց սակայն չայ մուսայի մը եռանդը վառուեր է երբեմն ատիկայ մեղի թարգմանելու, և թերեւա՝ եթէ կրնանք մակաբերել վերոյիշեալ երկու սրբազն անձանցմէ մէկն ու յետին ըլլայ այդ թարգմանը։ Այս այն գիրքն է որ կու տայ մեզ ու բոլոր հելլենական դպրութեան՝ Մեծին Աղեքսանդրի պատ-

մոթիւնը՝ անբաւ առասպելներով ու անհեթեթ զրոյցներով խճողեալ, և ինչ-պէս կը կարծուի կալիսմթենէսի անտամբ ուզեր է խարել զաշխարհ։ Բայց մեզ ցաւալին այն է, որ յետ սրանչելի թարգմանչին՝ այլը, մանաւանդ խաչտուր կեշառեցի մը՝ որ ապրած է ձի գարու վերջերը ու ժիին սկիզբը, յանդըներ են մաքրել այն գիրքը՝ ի հեթանոսական զրուցաց։ Երանի թէ մաքրած ըլլար, և ոչ տւելի եղծած վասն զի այսօր բաղդատելով իրեն օրինակը յոյն բնագրի մը յետ՝ զոր հրատարակած է Միխլէու՝ ի Բարիզ, կը տեսնենք որ մաքրեկիքը ձգած է, և միայն շարադրութիւնը խառնակեր է։ Այսու հանդերձ ընտիր գրչի մը հետզին յայտնապէս կը տեսնուին բոլոր զրբին բնդեացքին մէջ։ գեղեցիկ նմանութիւն մը, և ստէպ այնպիսի կտորներ՝ զոր կը տեսնենք փոխ առեալ Մովսեսի խորենոցւոյ գրոց մէջ, որ անշուշտ այս սուտ կալիսմթենեսի զրբէն օգտուած է։ վասն զի արեւելեան հանճարն, մանաւանդ առ հինս, շատ հաւատք ընծայած են Անցայտ (Aροցυρης) Գրոց, ինչպէս նաև նոյնպիսի գրեանք շարադրութք ալ շատ երկացած են յարնելս։ Այս մանր ծանօթութիւնս կանխեցինք տուինք այս գրքին համար, ցուցընելով որ մեր մատենագրութեան միակ հեթանոսական գրքի թարգմանութիւն ցարդ զայդ գիտենք, և այն ալ հաւանաբար վերդիշեալ անձին երկասիրութիւն ըլլայ, որով և հետեւաբար քերդողական և մանաւանդ հոմերական տողից օրինակն առաջին իրեն ընծայենք աներիբայ կերպով։ Երբ Աղեքսանդր իր ահեղ աշխարհակալ զինուքն կը հասնի աւերելու զթերէ և կադմեան դուռը, այն տեղ խօմենիսա թերայեցի նուադաւորն ընդառաջ կ'ելլէ աղաւելու մեծ աղօր թագաւորին զթութիւնը, որ գոնէ այդպիսի պանծալի քաղաք մը իր սրոյն նարակ չտայ։ և ըստ պատմելոյն սուտ կալիսմթենեսի՝ ի ծունը խոնարհեալ այսպէս կը նուագէ աշխարհի երգը Մեծին Աղեքսանդրի առջև։

« Թագաւոր և զարմ ասսուածոց, չքեզ և գեղեցիկ Աղեքսանդրէ։ այժմ փորձիւ ուսացյ զքո հանգիստապատիւ ասսուած զօրութիւնդ։ և պատուեմք այսուհետև իրեն զաստուածս բարեբար։ արգել զանպարտելի զձեռնդ։ ի թերա, յեցւոցդ, զի մի գուցէ ոչ զիտերով՝ ժուեսցիս առ ընտանիս և ազգակիցս քո ամբարշտել։ Քանզի Դիոնիսիոս և Հերակլէս թերայեցիք և փառաւորք, նաև նախնեաց մերձաւորութեան խառնից սկզբնասեր բողոք Արամազդայ և Սեմելեայ։ Հրադիզ Դիոնիսիոս ծնեալ եղեւ։ Խակ Հերակլէս յԱրամազդայ և յԱղկմենեայ սերմանեցաւ Սորս ամենայն մարդկանք և խաղաղականք, փըրկութեան պահապանք երևեցան, և քո են նախահարք, ոյ յաղթողդ Աղեքսանդրէ։ Սոցա բնութեամբ պարտ է քեզ նմանել և բարեբար լինել։ իմր ասսուածոց ծնեալ զարմ մի նատես առներ զինունիսեայ և զէերակլեայ զայեակս՝ զթերաս ի կորուստ մատնելով։ և մի զզուարակալշէն (Յօօկտիսօն) քաղաքս կործաներ։ քանզի նախատինք յետոյ Մակեդոնացւոց եղիցին։ Յանդէտս լինիս, Աղեքսանդրէ, զի թերայեցի ես դու և ոչ պելլացի։ բոլոր քեզ թերայեցւոց աշխարհս աղաւէ։ զքո նախարարս թերելով զաստուածս հնծանեան փողաւորի Դիոնիսի ուրախութեամբ և պարուք, որովք Հերակլէս արդար՝ գործովք և օգնականութեամբ մարդկան։ Արդ նմանող եղեալ քոյոց նախնեացն բարեացն և

1 Arriani Anabasis et Indica. Fr. Dübner. Reliqua Arriani.. et Pseudo-Callisthenis historiam fabulosam edidit Carolus Müller. Parisiis, 1846.

2 Դիոնիսիոսի Հրադիզ ածականը այս առաջին անզամ կը հանդիպինք այս տեղ, և յոյն բնագիրն կը զնէ ուր Ածխւու։ Ումանք սիալմանք Հրադիզ ածականը Սեմելեայ տուին, բայց յայտնի է Դիոնիսուն Սեմելեայ և Դիոնիսիոսի կամ Բաքրոսի առասպելը։ և այս տեղ կ'ուզէ Հերակլէս նշանակել թէ Դիոնիսիոսի կրով ծնաւ, բայց բառին ստուգաբանութիւնն անցայտ կը մնայ մեզ, և ուրիշ օրինակք կ'ընթեռուն Հրադիզ։

3 Յոյն կըսէ որոպէտօրչէ, զնախահարս։

քաջացն՝ 'ի յուրակի բարեգործամթիւնս շրջեալ դարձո զքեզ՝ 'ի բարկութենէդ. պատրաստ առ ձեռն քան զսատակելն՝ զողորմելն կալ: Մի՛ առներ անսպատ զքեզ սերմանողս աստուածս, քոյոց ծննդապետացն (յεնεօրչան) մի՛ քակուեր կործաներ զքաջաքս քո զսեպհական դաւառ: Եւ մի՛ անդիտութեամբ բրեր 'ի հիմննց զայսպիսի պարիսպս շինեալս 'ի Զեթոսէ և յԱմփիտնայ. վասն զի երդովկ և նուագաւ քնարի դու Արամազդայ որդի՛ զըր դադուկն ծնաւ հարմնն նիւքտեայ դուստրն 'ի պարս մնիեալ: Զհիմննս զայս և զմեծամեծ շինուածս աշխարհաբար շինեաց կադմոս: Աստ առնու հարսն զիրմնիաս՝ զոր ծնաւ փրփրածինն կիպրոս (ձերօրշանէ Կուրու), ընդ կշտագողին թրէկացցւց (Եթ ունչիութեալ Թրէկացցւց) խառնակեալ: Զըր անդաստանս մի՛ առանց հասանելց ՚ի վայր՝ աւերեր, և բոցակէզս առներ զամենայն պարիսպս թերայեցւոց: Թագաւորի Լարդակայ՝ է տունս այս, աստ արար կին չար գեն և թշուառական<sup>2</sup> զհայրասպանն զիդիպոս ողորմեի և վշտագին մայրն: Այս Հերակլեայ մեհեանն էր, բայց նախկին Ամիստրիոնայ<sup>3</sup> տուն էր. սա տրտնչեաց<sup>4</sup> երիս գիշերս Արամազդ՝ ՚ի մի թաւեցեալ: Տնսանես զայնս շրջանակի բոցակիպեալ տունսն՝ որ տակաւին 'ի վայր կաթեն զերկնի գելնն: անդ գփափագելին՝ յորում տոփեալն էր՝ հարկանէ զինեմելէ երբեմն Արամազդ: Ահա հրայս 'ի մէջ զչուափիովտացին (Եթագաւունուն) Ֆնաւ զիիոննեսիոս հնանեան: աստ Հերակլէս մոլեզնոտեցաւ<sup>5</sup>. աստուստ և Հերակլէս ելեալ մոլորութեամբ՝ սպան զՄենգարա գիկնն, և զմանկունս խոցուտեաց նեախւք: Այս բագին՝ զոր տեսանես Անահտայ (Արաւ) բարձրածեղուն շինեալ, որոշեալ է բագին հին, յորս և Հերակլիս, յորում և Հերակլէս պատունան յԱրկադայ կարելով մազաղեցաւ ձեռօք Փիլոքտետեայ յարեան վիշապին<sup>6</sup>: Այսորիկ են անընթ անարատին բանք աստուածաբարբառք Տիրեսեայ տունքն, որ երիցս ազգաց և դարուց աստանօր լինի գէտն: զոր 'ի կին շրջեալ կերպարանեաց Տրիտոնեայ<sup>7</sup>: Աթամաս մոլեալ աստանօր, զմանուկ զիւր զլէ արբոս նեախւ եսպան յԵղնորթ տպաւորեալ: Աստանօր ինով վազեալ անկառ յանդնդային ալիս Մեկիկերտաւ մանկամբն 'ի կատաղւոյն<sup>8</sup>: Աստուստ կոյր իգիպոս 'ի բաց հալածեցաւ հրամանօք կրետեայ<sup>9</sup>, որոյ ցուպն պատերազմ շնչէր. և այս գետս որ 'ի միջի կիթերունիս է, իսմենոսէ, մոլեկան (Քաշչեւու) ջուր բերելով: Ելատէն<sup>10</sup> զոր տեսանես 'ի բարձր վերացեալ ոստովք: աստանօր Պենթես զՊանթեայ զպարսն կամեցեալ

1 Յոյնն կը գնէ ուլչից: իսկ տպագրողն կուզէ ուղղագրել և գրել ուն Ճառս, մինչդեռ կրնար հայկական օրինակին համեմատ սրբագրել Ճաճճակու: Վասն զի Լաբդակու հայր էր Այսոսի և Թագաւոր թերելի:

2 Խմաստն է. Աստ ծնաւ զթշուառական զհայրասպան զիդիպոս....

3 Յն. կը կարգայ՝ Ամիկիկտինայ, բայց ընտրելոցոյն է հայ օրինակն:

4 Ըստ տպագրեալ յոյն օրինակին ափիս ըլլայ. Աստ ննջեաց երիս գիշերս,

5 Այս տունն կը յիշենէ ընթերցոցաց Եւրիփիդեայ սպրերգութիւններէն մէկն որ կը կոչուի՛ Հերակլէս մոլեզնուստ (Արշակուն բաւումենօչ), յորում կը կարդանք նաև գրեթէ այս խմենեան ամբողջ բանաստեղծութիւնը:

6 Դիցարանութիւնն կ'աւանդէ թէ Հերակլէսի բազում քաջութիւններէն մէկն ալ այն էր որ կենդաւրոսները սպաններով կը կրէր անոնց թունալից պատունանը: իսկ Փիլոքտետս իրեն բացութեանցն ընկերն էր:


7 Տիրեսիս, Թերացւոց անուանի գուշակը կամ գէտը, որ զԱթենաս 'ի լոգարանս տեսնելուն համար կուրացաւ:

8 Աթամաս թերացւորը Թագաւոր հրո որդւոց չարութեանը հտմար մոլեզնոտաւնասի իր էւարոս որդին ժայուի մը վրայ ջախչախեց, և ետքը ծովին հալածեց իր երկրորդ կինը ինով՝ և միւս որդին Մեկիկերտ:

9 Կրէոն բանառը հաւասեց յեւսուն մասսը:

10 Ելատէ (Ելատու) է Եղեկ Հայութ Գուգակ Հայութ Գուգակ:

Պատա.



տեսանել, 'ի ծնող մօրէն թշուառականն յօշ յօշ կոտորեցաւ<sup>1</sup>: Աւադան տեսանես՝ որ իջուցանէ արիւնագոյն ջուր, զինի որոյ զուարակի դժնդակ զոյխն հնիչ. այս վոտակ է գարցեցելոց գրկաց<sup>2</sup>: Տեսանես զայն զողորի զիլիկոյ, որ զերկայն զլեառն ունի իւր նեմարան, առաջ այս մեր ՄԵՔԻՆքս, յորում կապեալ ծրաբեցաւ հրաշաւորի խառնուած, գործելով 'ի մէջ ժողովրդոց խեռաստամբակութիւն, զոր իդիպոս սպան բազում հոգս հոգացեալ. Այս աստուածոց աղըքիւր է և պանչելի աւազան ջրոց, յորմէ համանգամայն բիւն գեղեցիկ նահանգք և վոտակը. Արտեմիս իջեալ լուացեալ զմարմինն և սրբեալ պայծառանայր. սա սուրբ Արտէն զոր ոչ է պարտ և արժան ասել, ետես զլոցարանան Ղետովայ, որոց փոխեալ յեղն մարմինքն 'ի շանց զիշակերաց վասն լոգանացն որսացեալ եղն. իսկ մանկունքն պատերազմ ետուն ընդ թերաս: Աստուստ Պողիկէս էած զիրգիացւոց ժողովուրդն զօր արդնակիր զեօթնեռանդն զգետն. աստանօր հապաւանիւս առ պարիսապս բոցակէզ եղն, և զդրունս զայսովիկ կոյեն ելքբարաց, և ընդ զրունս ելանեն պախս և ընդ անվթարս. զիմիսարեսոս բացեալ եկուլ երկիր ուգիտեան երիցս աղիսեալ զրամբք. զչիւպունենգոտէ զչիւպութենայ որդի սպանանէ անկեալ 'ի ձեռս աւազակաց առ զրունս այսոսիկ: Պարմենիպոս յորժամ յերկիրս եկն 'ի զրունս յայս բիւր սատակիչ անուամբ կոյեցաւ. քաջալերեալ ծուգեւս կալիդոնացի անց եկաց. աստանօր կուղենիկէս և Ռւկղէս ընդ միմեանս հարան. աստանօր Ազրատոս փախեաւ և մեռաւ: Այս զրունք և քաջապս թերայեցւոց թագեաց զգարանապետոս Արդիացւոց<sup>3</sup>:

Այս փոքրիկ քերթողութիւնն՝ զոր հայ լեզզուաւ կարգացինք, անշուշտ հելլենածաշակ բանասէրք շատ վար չեն զասեր քան զՊինդարուն և ուրիշ անուանի քերթողաց թուփքն, թէպէտ շատ տեղ զրչագրաց աղաւաղութեամբ իմաստներն ալ անիմանասի մնացած են, մանաւանդ 'ի յոյն օրինակին, զոր թերես կրնար այդ Պատմութեան հրատարակոյն տեղ տեղ չայ օրինակաց համեմատութեամբ ուզզագրել: Բայց կրնայ մէկը հարցնել մեղ թէ ինչ յարմարութիւն ունի այդ բանաստեղծաթիւնը հոմերական տողերու և բառգրի հետ: Ըստ մեղ, քան զամեն տողերն՝ զոր վերջը պիտի յիշատակենք, այս կտորը շատ աւելի զերազանց կը համարինք, թէ ըստ գրութեան և թէ ըստ հնութեան. մանաւանդ որ այս վերջիշեալ պատառիկը ըստ չելլենացւոց տաղաչափութիւն մ'է, ոչ միապէս բոլորն ալ, այլ տիրող չափն է երկոտասանոտեայ<sup>3</sup>. ուստի այս ամբողջ կտորն ալ կրնայ գասաւորուիլ հետագայ ըստելիք տողերուն հետ: Նմանապէս տաղաչափութիւնն է նաև անոր շարունակութիւն փոքրիկ մասն ալ որ կը սկսի « Ռվ ամենաչար ծնունդ կադմէացւոց, և չարավիրագ բոյս թշուառական արմատց »<sup>4</sup>.... Այսպէս վեր 'ի վերոյ յիշատակելով զասոնք անցնինք հիմայ բուն

<sup>1</sup> Պենթէւս, թերայ թագաւորը, ուզելով Պաքքոսական տօները վերցնել, զինքը պատուեցին իր կատաղի կանայքն կիթերոն լերան վրայ:

<sup>2</sup> Վերջին բառերը պէտք է կարդալ բարչեցելոց Դիրիեայ: Դիրիէս էր Այւակիս թերացւոց թագաւորի կիթը, զոր Զեթոս և Ամիկոն յաղթիր փոխեցին կապելով զանիկայ կատաղի ցըւ մը:

<sup>3</sup> Գրոցս հրատարակողն Carolus Müller այս ծանօթութիւնը կու տայ չափոյն համար. Quod sequitur carmen lacerum sine meliorum codicum ope restitui nequit. Versuum ratio non ubique eadem fuisse videtur: trimetri justae mensurae a scribis aevi seqvioris in versus dodecasyllabos mutati sunt. (Pseudo-Callisthen. I, 45, 48. not. 23.): Կը կարծէ ևս նոյն դիանականն որ այդ պատմութիւնը առնուն ըլլաց Սուտերիքոս քերթողի մը դրէն, որ կը կազուէր Ալեքսանդրիադը (ո՛ Ալէչանձրաւծօծէ). և որուն համար կ'ըսէ Սուտեր թէ կը պատմէր Ալեքսանդրի պատմութեան այն միջցը, երբ զթիրէ առաւ, որով կը նոյնանայ կալիսթենեսի պատմութեան այս կտորին հետ:

<sup>4</sup> Հայ տպ. 1842. էջ 70 յորում սխալ կէտագրութեամբ կը սկսի խօսքը, որ պիտի

Հոմերական բառազրոց և տողելրու. Եթէ մենք ալ Հոմերոսի քերթութեանց բառդիրք շինող մը ունենայինք, ինչպէս առ յօնս Եւստաթիոս, այն ատեն կրնայինք կարծել համարձակ թէ խարգմանութիւն մ'ալ եղած ըլլայ այն քերթութեանց : Այս յիշատակեալ բառազրոց մէկն միայն յայտնապէս կը զրէ իբրև վերնադիր « Բառք քերթուականք վասն չափոյ Հոմերական տառիցն » . աղէկ խարէկան վերնադիր մ'է այս եթէ նիւթապէս հասկնանք Հոմերական բառը, բայց ինչպէս ամեն ուստամք և արուեստ շատ անգամ գտողին կամ ճարտարագունին անուամբ կոչուած է, այսպէս Հոմերոս ալ իր անունը ընծայեր է ամբողջ բանաստեղծական դասուն և գիտութեան, որով պէտք է հասկընալ հօս բանաստեղծական բառեր : Բայց վերնադրով ինչ կրնանք լուծել, մտնենք տեսնենք բառարանն ալ, թէ արդեզր բանաստեղծ մ'ալ կարծող է այդ բառերը գործածել, կամ ովզ գործածեր է երբեք ՚ի նախնեաց կամ յարդեաց : Ահա ընտրելադոյններն այն բառերէն, զոր կ'ընթեռնունիք իբրև « Հանդէս բանաստեղծաց » և « Հոմերական տառից բառք » .

**Ավքանազ.** Հովանացեալ.  
**Աստանել.** յուղել կամ քննել.  
**Ասել.** կազմել.  
**Ասկանք.** պատմութիւնք.  
**Ասպազէն.** ձիոյ թամբ.  
**Ասեանս** (կամ առևանս) . գլուխ.  
**Աստուածապարակը.** ասին յեղյե. զորկը՝ որ զդիրս սուրբս կամա. կորեն.  
**Արփիտ.** երկինք երկնից.  
**Արփայ** և արփի. լցու.  
**Արտասանութիւն.** խօսարան.  
**Արտ.** հասուն.  
**Արտաքայլեալ.** բացաքայլեալ.  
**Արտասան.** պատմութիւն.  
**Արտուղցեալ.** ընթացեալ.  
**Արփնաթեել.** ՚ի կատար եւանել.  
**Արոյր.** ոսկէպղինձ.  
**Արահետ.** կուրաշաւիղ.

**Արափետ.** կուշտ.  
**Արինամատ.** սեաթոյր<sup>4</sup>.  
**Արտահերքել.** արտաքս հալածել.  
**Արուճանակ.** սիզացօղ.  
**Արձանակեալ.** հաստատեալ.  
**Արինասթոր.** արենաբուղխ.  
**Արդոստայր.** ապարանք... բաղել. պատմել.  
**Բազմակ.** ունելիք.  
**Բաժամիտ.** երկմիտ.  
**Բազրակ.** ճրագ. ունելիք.  
**Բարաշխ.** կակուզ, փիրխ.  
**Գարգանել.** խեցագարել.  
**Գեհ.** վիհ.  
**Գեհանք.** վարձանք.  
**Գամ.** ուժգնաձայն.  
**Գար.** երկու.  
**Գալապր.** տապար.  
**Գանդան.** լինդք, ատամունք.

բլայ. « Բարկութեամբ ասաց այսպէս առասպելս. Ո՛վ ամենուչար ծնունդ կադմէացւոց ». յն ծրցն անառնեան տօն էլու տօն մնջոն. 'Ω παγκάκιστον ἐκλόχευμακ Καδμείων (Pseudo-Callisthenes. I. 45, 46):

1 Ալյնամատ, սեարոյր. Հոմերական բառովքի բառով մը կրնանք Ա. Յովլէանու Ասկերամանի Պաւլոսի թղթոց մեկնութեան կտոր մը ուղղագրել, ՚ի մեկն. Տիմոթեայ Ա. թղթոյն սուաշին ճառին Յորդորակին վերջերը (Տպ. Ա. Ղազարու. 1862. էջ 12) կը կարգանք. « Եւ արդ աղէ ասա, աջ մատն լինել և երկայն և փոքր ոչ ապարէն անխոփի իցեն ». ուր թէպէս հայերէն բառերով ալ իմաստ մը կը հասկցուի՛ թէ և անոնց շարագրութեամբ, բայց որովհետեւ յօն ընագիրն կ'ըսէ. « Եւ արդ աղէ ասա, սեաւ լինել և երկայն և փոքր ոչ ապարէն անխոփի իցեն ». ուրեմն այն տեղ, ոչ մատն բառեր սուրիշ կերպավ մը կարգալու. է որ սե կարենայ նշանակել. և արդ արյի բառն ունինք յընափր գիրս՝ որ սե կը նշանակէ, իսկ արմաստ բարդութիւնը կու տայ մեղի միայն այս բառզիրքը, ուրեմն կրնանք ուղղագրենով կարգալ : « Եւ արդ աղէ ասա, արջնամատն կամ արջմատն լինել և երկայն և փոքր » . . . .

Դիոզն.	ոստին լինել զինու միցու-	Ընդողնել, պարանոցել.
թեամբ.	(յն, ծիսակօն).	Թաթել, խարել.
Եղնոց.	գոմ.	Թռոակուռ. մախաթ, հերիւն.
Զակունիք.	անուն հողմոյ.	Ժամ. խծուժ, խծիճ....

Հարկաւ չի կարծեր մէկը թէ այստափ բլայ այդ բառագրոց ընդարձակութիւնը, այլ գեռ շատ բառեր կան որոնց ոմանք սուրբ գրոց բառեր կ'երևան, ոմանք երբայցի, այլք յոյն, և այլք ալ ուրիշ գրքերէ՝ ինչպէս 'ի Փիլոնէ և այլն. ասով կը առենուի թէ շարագրողին միոքը չէ բանասիրաց քերթողական բառ զիքը մը ընծայել, այլ ամենայն բառից կոյս մը՝ որ ըստ ձեռագրաց ալ կը զանազանին իրարմէ թէ՝ մեկնութեամբ և թէ բառերով:

Բայց ոչ այնչափ այս բառողիքն, որչափ միւս հոգեբական բառաձայն տողերն կը նանան հետաքննութեան նիւթ մ՞ըլլալ բանսամիրաց, անոր համար կը փութանք անոր ալ փոքրիկ հաւաքում մ՞ընել ՚ի նախնեաց, ուր որ կը նանանք հանդիպել կամ կարդացած ենք, Եթէ բոլոր եղածներն ալ չկարենանք զնել, կը ջանանք գոնք շնորհելաց յնները գնել, որոնց մէջ աւելի հայկական գրիչ ու հմտութիւն կը փայլի. իսկ որ իմաստն միմին ու խառնակ երևայ՝ կը ջանանք պարզելու զայն և այնպէս նշանակեյու:

Հոմերական տողերը, զոր կ'ըսենք, չեն հաւաքածու մը կամ տեղ մը միայն ամփոփած տողեր, այլ այն ամեն տողերն զոր Հոմերի կամ ուրիշ քերթողի ա- նուամբ կը յիշատակեն մեր նախնիք՝ սկսեալ՝ ի դիոնեսիոսի քերականութենէն մինչև ՚ի վկայարանութիւնս ինչ սրբոց, կը կոչեմք Հոմերական տողեր, եւ հօս զնենուու պատճառն այն է որ ցուցընենք թէ այդ տողերն չափ մը կամ տաղաջա- փութիւն մը չեն տար մեզ, այլ պարզպապէ թարգմանութիւն են ինչ գրոց մէջ որ հանդիպեր ու տեսեր են մեր նախնիք: Բայց անոնց չափերուն վրայ՝ օրինակ- ներէն վերջ կը խօսինք: Հիմայ զնենք բուն օրինակները:

**Զբաղում մարդկան ետես զբաղաքան, և գլխուս ծանեաւ։**

Ինչպէս հեթանուներուն սովորութիւնն էր՝ իրենց իրատական խօսքերն ալ փոխ կ'առնուին ՚ի Հոմերոսէ, և այն երկու զիւցազներգութիւնքն էին անոնց իբրև սրբազն գիրք մը. արդ ըստ պատմելց առոյն կալիսմեննեսի երբ հոռամյեցի և էքսիլորատորէսք <sup>2</sup> և առ Հայս լրտեսք » եկան Նեկտաններոս թագաւորին և յորդորէին զիթագաւորն որ ուրախութենէ հեռու կենայ և պատերազմի պատրաստուի, կը յիշեցնեն իրեն հոմերական երկու տողերն, ըստեղի.

Ու է պարտ և արժան զիշերն ամենայն ի քուն կալ առն խորհրդաբերի,  
Որում ժողովուրդը յանձին են և այսպահ հոգը<sup>3</sup>.

**1 θε.** Πολλών δ' αὐτῷ πων ἔδει ἀστεα καὶ νόσου ἐγνω. Λιμηνία ταῦτα φέρειν, οὐκέτι μάρτυρας θεοῖς, μάρτυρας φύσεις.

## 2 *Los Exploradores, pioneros*

**3 Βρυξ.** Όυ χρή πανύψχου εῦδειν βουληφόρον ἄνδρα,  
ῳ λκοὶ ἐπιτετράφαται ἡ τόσσα μέμηλεν.

Խակ երբ Աղեքսանդր և Նիկողայոս ձիավարական փորձոյն ձեռք կը զար-նեն, և Նիկողայոս ուղելով խարէութեամբ յարգիթել Աղեքսանդրի ինքը կը յաղ-թուի, կ'ինայ ու կը մեռնի . պատմագիրը վախճանելցյն վրայ Եսիոդեայ առզ մը կը դրոշմէ.

Մարդ՝ որ այլում չար կազմէ, իւրում իսկ լերդին կազմէ.

Եւ չար խորհուրդ՝ խորհեցելում յոյժ չար է<sup>1</sup>:

Կ'անցնի Աղեքսանդր յշդիպոս, և այն տեղ ալ Սարապիս աստուածոյն կ'ազօթէ և կ'ազաշէ ըստ հոմերական բանից<sup>2</sup>, ինչպէս կ'ըսէ յոյն բնագիրն « Եթէ կացցէ մնասցէք քաղաքս այս հաստատուն յանունս յոր շնուցաւ՝ Աղեք-սանդրի, և թէ ոչ շրջեալ փոխեսցի անունս իմ յայլց թագաւորի անուանակո-չութիւն, զեկո ինձ »: Նցն Սարապեայ. աաճարին մէջ Աղեքսանդր աղօթելով՝ ըստ առասպելեաց կալիսթենի՝ կ'ըսէ. « Ո՛ արդեօք ես հոգածու նախախնամող երկրիս այսորիկ, և զանոլորս աշխարհ յականելով, առ ընկալ զպատարազս զայս և գնանական ինձ լեր՝ ի պատերազմունս<sup>3</sup> »:

Նաև ամենայն դից պատգամներ տաղաչափական կանոնով էին, ուստի Ամոն աստուածոյն պատգամն ալ որ եղաւ առ Աղեքսանդր, տաղաչափութիւն է.

Ո՛վ թագաւոր, քեզ Փիւգոս<sup>4</sup> խոյեղիւր ասեմ,  
Զի թէ կամիս յաւիտեան անծերանալի կալ մնալ  
Նինեա քաղաք նշանաւոր Պրոդիագայ կղզւոյ,

Որոյ առաջց անցեալ նստի Պղուտոնիս

Հինգակատար գագաթմամբ զանսպառ աշխարհ պատերով<sup>5</sup>:

Դարձեալ յետ առաման թերէի, քաղաքացին կը զրկեն հարցընելու պատ-գամ՝ ի Գեղիփիս, թէ արդեք յոյս մը կայ որ իրենց քաղաքը նորէն շնուրի և ձեռք բերեն իրենց հայրենիքը. Ապողոն պատասխան կու այս.

1 Ցն. օլ աւտօ ռառած տեսչեւ ձևակ ռառած տեսչան.

2 Հօս հայը կը դնէ « և յերագին աղաչեալ զաստո.աանն... », որ ըստ յունին պիտի ըլլար՝ ըստ հոմերական բանից աղաչեալ զաստուածն. վասն զի ռատ՝ Օբորօն՝ կարգա-ցեր է չառ՝ ծներօն.

3 Նցն խօսք տարրեր թարգմանութեամբ կայ նոյն տեղ. « Ո՛ ոք երբէք ուրեք ես աստուած, որ հոգեւոր ինամ տանիս այնմ երկրի և զանսպառ աշխարհ տեսանես. առ ընկալ զիմ զուս և օդնական իր ինձ՝ ի պատերազմունս »: Նցնպէս՝ ի յունին տաղաչա-փութիւն է այն խօսքն որ կը սկսի « Անտրտմելի է և գեղեցիկ... (Էջ 43 հայ տպ. մինչեւ՝ ի 45 ո՞նաւորեցայ գոյ և աստուած) »:

4 Փակոսը պիտի ըլլայ Փեսոս որ է արեգակն.

5 Նոյն տողերը քիչ մը տարրերութեամբ թարգմանուած են նոյն գրքին մէջ ուրիշ մը:

Ո՛վ թագաւոր, քեզ ամբի անարատ եղիւրս խոյոյ ասեմ,

Եթէ կամիս յաւիտենական անծերանալի անսպառ ժամանակաւ նոր կալ և մնալ,

Նինեա քաղաք նշանաւոր գեր՝ ի վերոյ Պրոդիագայ կղզւոյ,

Որոյ առաջց անցեալ նստի յաւիտեան Պղուտոնիս ինքն թագաւորելով,

Հինգակատար գագաթմամբ զանսպառ աշխարհաւ պատեսալ:

Զոր և մերս նորենացի փոխ առնելով գրած է իր Պատմութեան Երրորդ գրքին մէջ (ԿԲ. տպ. 1863. էջ 261), յիշելով զԱղեքսանդրիս համբաւաւոր քաղաքը և կ'ըսէ « Սորա առաջին այժմ ոչ անցեալ նստի Պղուտոնիս Հնդկակատար գագաթմամբն զան-սպառ աշխարհ պատերով, այլ Մարկոս աւետարանական քարոզութեամբն... ». Ասոր նման և ալ աւելի զգալի փոխառութիւններ կամ օրինակութիւններ կ'երևին այս երկու գրոց մէջ. որով թերեւս զարմանայ մէկը թէ ինչ հաւաստիք գտներ է խորենացին այս պիտի առասպելեալ գրքէ մը, այսինքն Մեծին Աղեքսանդրի Պատմութիւնէն, իրեն նար-տասանութեան և պատմագրութեան օրինակները քաղելու.

Հերմէս և Ակիդէս և պարսպամարտն Պողիտեւկէս,  
Երեքեան սորա աշխատութիւն կրելով՝ յարուցեալ կազմեացեն գըեղ, թէրը ։  
Իսկ երբ Սարապեայ դից պատգամները լսեց՝ զոր վերը դրինք, հրաման  
տուաւ իր Պարմենիոն ճարտարապետին որ պղնձի պատկերներ շինէ և մեհեան  
« որ բերէր յինքեան զհոմերական տալիցն, որպէս ասաց պանչելի երդին  
այն Հոմերոս » ։

Եւ կապուտակային յօնօքն ակնարկեաց Զրուանեանն,

Եւ պանչելի աստուածային վարպն շարժեցան յանմահ գլխոյ թագաւորին,  
Եւ մեծապէս շարժեալ տատանեցաւ Ողիմոս ։

Այսափ տող և կոտորակը Մեծին Աղեքսանդրի Պատմութենէն, զոր նախ-  
նիք մեր այնչափ սիրեր և թարգմաներ են: Բայց դից պատգամներու կարդ դա-  
սելու է զոր երողոտոս յոյն պատմագիրն կը յիշէ (Գիրք Ա. 65), իրրե թէ կի-  
կուրդոս զերխական մեհենին պատգամ հարցընելու երթալոր Պիւթեան հար-  
ցուկն այս պատասխանը կու տայ անոր, որ ըստ երողոտեայ չորս տող է, բայց  
երեք տողը միայն թարգմանուած կը դատնենք 'ի հայ Դաւիթ Անյաղթին գրոց  
մէջ (Սահմանք. էջ 444), և է այս.

Որդ եկիր, ով Լիւկոյերգէ, յիմ ճենճերալիր տաճարս,  
Յերկրայս գոմ զինչ գքեղ ասացից, աստուած՝ թէ մարդ,  
Բայց սակայն աստուած առասացից զքեղ, ով Լիւկոյերգէ ։

Ուրիշ տեղ մ'ալ նոյն Անյաղթն Դաւիթ 'ի թէոգնեայ օրինակ բերելով  
Կ'ըսէ.

Պարտ է յաղքատութենէ փախչել և 'ի մեծակիուեղն անկանել ծովն,  
Եւ 'ի վիմաց, սկիւռնէ? հոսիլ յարեգակնափոխն:

Նոյն Դաւիթին է նաև Պելլոն լերան մակուրը՝ Ցերեալարդն Քիղովն,  
յոյնն ըստ Հոմերի:

Πήλιον είνοσίφυλλον. (Խիակ. Բ. 757):

Բայց քան զամեն դիրս ճոխ են այս մասամբ Փիլոն երրայեցւոյն մատենա-  
գրութիւնքն, որ յիշատակէ զՀոմերոս, զԵսիոդոս, զԵսքիլոս, զԵւրիպիդէս և զ-  
Պինդար. Հոմերականքն արդէն շատ անգամ կրկնուած են.

1. Յն. Ἐρμῆς τ'Αλκιδης καὶ ἴμαντομάχος Πολυδεύκης,  
Οι τρεῖς αὐθήσαντες ἀνακτήσουσι σε, Θήβη.

2. Յոյն. ζαմերոս Խիակ. Ա. 328-330.

‘Η, καὶ κυανέησι ἐπ’ ὅφρύσι νεῦσε Κρονίων  
‘Αμβρόσιαι δ’ ἄρα χαῖται ἐπερέώσαντο ἀνακτος,  
Κρατός δὲ ἀθανάτου μέγαν δ’ ἐλέλιξεν Ολυμπον.

3. “Հեռէ, ա Առօրօրց, էմօք ուու պիուն տոն...

Διէզ, ո՛ սե Ֆեօն մաւենօրմա, ո՛ անքարոս

‘Ալլ’ էտ ուու մաշալոն Ֆեօն էլուումա, ա Առօրօրց ո.

Կ Ճիշտ նոյն օրինակն ուրիշ ոճով երկու անգամ կայ Պիսոցից գրոց մէջ, բիաս  
իմաստակին տրուած. Պարտ է յաղքատութենէ փախչել և 'ի մեծն անկանել ծով, և կամ  
'ի միաց հոսիլ 'ի բարձանց:

Կամ Պարտ է յաղքատ չբաւորութենէ փախչել և 'ի մեծն ծով անկանե, և կամ  
'ի ծայրագոյն հոսիլ բարձանց գահից:

ի կիկոպայց յերկիրն յամպարհաւածից յանօրինաց յանգատից հասաք, Որք յաստուածս պանձտցեալ վստահ են յանմահս .  
Ոչ տնկեն ձեռքը տունկ և ոչ վարեն,  
Այլ այնպէս անսերին և առանց վարելոյ ամենայն ինչ բուսանէր,  
Ճորեանք և զարկիք և որթք՝ որ բերեն դինի քաղաքոյզ

եւ յանկարծօրէն անձրեւ աճեցուցանէ : (Փիլոն . Նախախնամ . 105) :

Եւ իշխականէն .

• Թէ ոչ յիշեաւ յորժամ կախելով էիր 'ի բարձու զոտանէ ,  
Եւ սալս երկու արկի զոտիցդ , և 'ի ձեռսդ կապանս արկի ոսկիս  
Առանց հատանելոյ . իսկ գու յարփին և յամզս կախեալ կայիր ,  
Եւ աղաշէին աստուածք յերկայնն Ողիւմպոսի , և լուծանել ոչ կարէին :

Իսկ յԵսիոդոսէն (Ծննդ . աստուածոց . 28) .

Գառինս արածէր յԵլիկոնայ յաստուածաբնակ լիրին ...

Զայլց վաստակս յիւրեանց որովայն մուծին . . . :

ՅԵԿՐԵԼԵԱՅ . « իսկ ժանտապատուհամ զբնդունայն զժողովրդակիր զկղակն շուրջ  
արկեալ լնու մեռելոց մարմինս թալելով » : Գարձեալ նոյն յԵպիլեայ .

« ԶԱՐԱՄԱՂԴ՝ չարագործացն յաղգէն հանէ և 'ի զրկողէն օրէնք 'ի բաց » :  
ՅԵՎՐԻՖԻՂԵԱՅ . « Բան ինչ ախտացեալ առանձինն՝ բազում պէտս ունի գեղց  
իմաստնոց » : Հոմերականներէն կան ուրիշ երկու կտոր ալ նոյն ֆիլոնին գրոց  
մէջ , որ տեղ մը կ'ըսէ .

« Զի որպէս քերթողքն ասեն . Մերձաղաւակք և մօտասերք են և նոյնասեր-  
մանք աստուածոց իշխանք . (քանզի առաջնորդք և իշխանք են՝ որպէս նորայն  
ասեն , բարի և չարի առնել յաղագս ինքնակալ իշխանութեանն կարէն) » :

« Եւ սակայն աստուածքն՝ օտարաց նմանեալ այլաշխարհեայց , ամենապա-  
տիք անզիտութեամբ շշէին , զրագում մարդկան զթշնամանս՝ զանօրէնութիւնս  
և զրարի օրէնս տեսանելով և յականելով <sup>1</sup> » :

Իսկ Պինդարուն խրթին ու անիմանալի տողերը՝ զոր հայ թարգմանը մեզի  
կարգացնել պիտի տայ այս տեղս , գեղեցիկ իմաստ մը կը պարունակեն . և հե-  
ղինակը յօրինած է զայն արեգական խաւարման վրայ , զոր և Դիոնեսիոս Ավ-  
կառնացին քան զամենքն վեհ և ընտիր կը դասէ այս փոքր երզը . բայց ափսոս  
որ հայ թարգմանիշը բոլորական խաւարում մը ընծայեր է այդ բարձրաթռիչ  
տողերուն .

Ճառագայթ արեգական համբակ բազմադէտ ,  
մի տար զեեզ թոյլ մարմնային աշաց ,  
աստղ գերիվերակոյն տունջեան  
կուցեցեալ զոր եղիր թագաւոր  
զրութիւն զայնը զոր և իմաստութեան ճանապարհի  
խաւար անհետ եղեալ  
վարել իմն մանկագոյն քան յառաջն ,  
Այլ զեեզ Արամազգայ ձի աստուած աղաշեմ

1 Βιοյն . Καὶ τε Θεοὶ ξείνοισιν ἔοικότες ἀλλοδαποῖσι ,

Ηαντοῖσι τελετέντες , ἐπιστρωφῶσιν πόληας ,  
Ἄνθρώπων υβριν τε καὶ εὐνομίην ἐφορῶντες .

անվնաս ՚ի բարեխառնութիւն իմն յեղմունք  
զոր երգեցից ովկ պանծալի պարկեշտ  
ամենահասարակ արուեստ :

Թողարկ ամենէն ալ վերջը Դիմուիսիքերականութեան օրինակներն՝ դնենք  
հօս ուրիշ քանի մը տաղեր ալ որ կան ՚ի նոննոս, այն գիրքը՝ զոր նախնիք կոչեցին « Գիրք Առասպելաց » կամ « Աղճառանք հեթանոսուկանք », որ կը պարունակէ Ս. Հարց ոմանց՝ ինչպէս Գրիգոր աստուածաբանի և Բարսղի զանազան ճառերու մէջ գտնուած առասպելական կամ հեթանոսական անուանց մեկնութիւնը և պատմութիւնը, յորում բնական կերպով կը յիշէ Հոմերոսի կամ ուրիշ քերթողաց տողերէն զոմանս, յորոց զոմանս ալ մենք յիշենք. « Հոմերոս զիտիդեայ ասէ.

« Իբր երիվար իմն ուժգին պարարեալ որոտալով առ մսուր . . . . » :  
« Այլ շուրջ զնովու վեղք բնակեալ լինէին, ենթասացեալքն անոտնաշլացը և գեանախշտիք . . . . » :  
« Զարհուրեալ յաթոռոյ ՚ի վեր վաղէր և հեծէր, գուցէ զնորս ստորերկրայս պատառեսցէ Պիսիդն երկրաշարժ » . . . .

Նմանապէս Պիտոյից գրքին մէջ ալ կը կարդանք, որ կ'ըսէ հեղինակն արտասանութեան վրայ խօսելով. « Արտասանելի է զգէմս, որպէս Հոմերոս զիտիսես » .

Հըդնի էր թիկամքը, սեադոյն գանզրահեր :

Բայց այս տեղ յայստիք վրիպակ մը կայ խօսքի, վասն զի այդ ածականները՝ Հոմերոս զիտիսեսին չէ տուած, ինչպէս կ'ուզէ ըսել մեր հեղինակն, այլ Ողիսական գրոց մէջ կը կարդանք Ողիսեսին քարոզին համար, որ կը կոչէր Եւրիսատոս. ուստի նախ ուղղագրելով պէտք է կարդանք. « որպէս Հոմերոս յՈղիսես կամ յՈղիսականնին » : Բայց որովհետեւ մեր Պիտոյից գիրքն ալ զրուած է ըստ այն գարուն ճաշակին, յորում ընդհանուր ուսուցչաց ոճն էր Հոմերի քերթուածոց մէկ մէկ բարոյական և ընտիր խօսքերը մեկնել և անոնց վրայ ճառագրել, այսպէս նոյն գրոց մէջ կը կարդանք ուրիշ տողեր ալ նոյն գիտմամբ զըրուած իրրեւ վերնագիր զրոց, որոնք Հոմերի կամ ուրիշ քերթողներու տողերէն. զոր օրինակ .

« Յիմար է՝ որ ընդ վեհս քան զինքն հակառակէ . . . . (Հոմերոս)  
« Որ Աստուծոյ հաւանի, առաւել նաև բուիցէ ՚ի նմանէ . . . . (Հոմերոս).  
« Ոչ բոլորեցուն զնոյն առեալ է » . . . (Մենանդրոս).  
« Խոհականագոյն իմաստութեամբ բազմաձեռն կարէ հերքող լինել զօրութեան. իսկ անվարժութիւն՝ անբառ աղէտ » . . . . (Եւրիպիդէս):  
« Վարժումն է ամենայն ինչ. կամ կրթութիւն է ամենայն ինչ » . . . . (Պիրիանդրոս):  
« Ոչ է բարւոք բազմիշանութիւն, մի իշխան եղիցի » . . . . (Հոմերոս):

1 Այս իմաստը կը պարունակեն այդ մթին ու խաւարեալ տողերն. « Ճառագայթ արեգական բազմագէտ, մի տեսից զբեզ առանց լուսոյ, Աստղ գերիվերոյ, ՚ի տունջեան թարուցեալ՝ խափանեցեր զիեանս մարդոյ և զիմաստութեան շաւիրս. ընդ խաւարին ընթանալով ճանապարհ նորանշան ընծայես տեսիլ քան զառաջինն ՅԱրամազգ երդուեալ, առաջեմ զբեզ, զերագասլաց երիւարսկ գարձուացես ՚ի յաջող բախտ Թերայ. ով պարկեշտ, ոքանչելիդ հասարակաց » . . . .

Նա և Պղասառն, պարագլուխն իմաստակիրաց թունաց, կ'առնու նոյնպիսի փոխառութիւններ 'ի Հոմերոսէ և յշխողեայ, և այն բարեբաղդաբար իր Օքինաց դրբին մէջ գտնելով թարգմանած է մեր Մագիստրոսն, ինչպէս կը կարծուի: Մէջ կը բերէ քերթողին հետևեալ խօպերն՝ զոր ըսած է կիկլոպեանց համար.

Սոքա իսկ էին ոչ վաճառականք, ոչ խորհրդածուք, և ոչ յօրինողք: այլ 'ի բարձրագոյն լերանց գաղաթունս բնակելով և յայրս գետնափորս հանդուցեալ էին իւրաքանչիւր ոք, ոչ մանկանց խնամս տանելով և ոչ միմեանց:

Ունիք նաև նոյն գրքէն Հոմերի այն կտորը՝ որ կը պատմէ Ոգիսեսի խորամանկութիւնը, թէ ինչպէս, երբոր Աքայեցիք պատերազմի գրաղած էին Տրովացոց հետ, հրաման տուաւ Ողիսես որ նաւերը ծով քաշեն. իսկ Ագամեմնոն նեղանալով կ'ըսէ.

Իբրու անհմուտ ոմն պատերազմիս լինելով  
Հաստատապէս զգեղեցիկ նաւող առ թշնամիսն մերժես. քանզի մանաւանդ Տրովացոցն լինիցին ըղձալի,  
և մեզ պատճառ արմատաքի խղելց. քանզի ոչ Աքեացիքս  
յաղթեցին պատերազմիս նաւացս այսպէս ձգելով,  
այլ գարձուցանեն զերեսս իւրեանց վաղվաղակի.  
և այսմ պատճառ բցու իցէ խորհուրդ, որպէս յայտնէ ոգեալդ առ 'ի քէն:

Եսիոդոս քերթողն գեղեցիկ նմանութեամբ մը բացատրած էր իր դրոց մէջ առաքինութեան հասնելու դժուարութիւնը, թէ ինչպէս դիր քրտամբք ստանալու նպառուակ գրեր են, թէ ինչպէս 'ի սկզբան դժուարին է ճամբան, բայց ծայրը հասնէլէն վերջը կը դիրանոյ ամենայն ինչ, Ահա այս օրինակը Պղատոն առնելով Եսիոդոսէն կը գնէ իր օրինաց գրքին մէջ.

Իսկ առաքինութեանցն զբրտինքն առաջի աստուածքն եղեալ են շըրջանակի,  
այնոքիկ որ անմահքն են. և երկար իսկ է և ծառայեալ ճանապարհն նորին,  
և դժուարին իսկ յառաջագոյն, սակայն յորժամ 'ի ծայրագոյնն հասցէ դիւրաւ բերիցի թէպէտ և էր իսկ դժուարագոյն:

Երբեմն նաև սուրբ վկայքն ու մարտիրոսներն կարծես մնոցած թէ ինչո՞ւ համար դատաւորաց առջև կանչուեր են, կը սկսին Պղատոն մը, Հոմերոս մը, Եփիլոս մէջ բերել, և անոնց խօպերը երկայն վարդապետութեամբ ճառել դատաւորց առջև, բայց արդեօք իրենք զայն խօսեր են, թէ յետին ճարտար զրիչ մը, հմտա քերթողաց Մետափրաստէս մը ուզեր է իր սկրելիները ոչ միայն սուրբ ընել այլ և ճարտասան և բանաստեղծ և հելլենանաշակ, թէպէտ իրենք ուրիշ աղգէ ըլլային: Բանակ հւստատուսեանց վկայաբանութիւնը, Պղատոնի վարդապետութիւնը մեծ տեղ բռնած է հօն, և զից հեթանոսաց ծնընդաբանութիւնը. կը յիշէ սուրբ իւստատիս առ դատաւորն Եսպիլոսի խօպերը թէ.

Աստուած իսկ պատճառ բանաւոր մարդկան, յորժամ չարացուցանել զհողելին կամիցի:

Ուրիշ սուրբ մը կը յիշեցընէ հին առասպելը .

« Զիոյ խըստերախի թոյլ տալ ՚ի դաշտի , և զղկին առ ջուրս ածեալ բռամք » : (վկայ . ինդոսի .) :

Իսկ կողրատիսի վարուց մէջ կը կարդանք . « Վասն Պիսիդ.ովիլի ասէ Ովմերոս », թէ՝ « Ժողովեաց զամկս , խոռվեաց զծով ամենային հողմովք , ամպովք ծածկեաց , ահագին որոտաց հոյր աստուածոյն ՚ի վերուստ , եկն Պիսիդովն և շարժեաց զերկիր , և զջրովացոյն քաղաքն և զնաւո Աքայցւոց » :

Նոյն սուրբն դարձեալ ստէպ կ'ըսէր դատաւորին հոմերական իսօպն .

« Զէ բարիոք բազմաթագաւորութիւնն , մի թագաւոր լիցի » :

Այսափս բաւական կը համարինք իրրե օրինակք , որոնք զանազան գրոց մէջ կը գտնուին , զոր նախնիկ քիչ շատ ճիշտ ու սխալ թարգմանենք են , երբեմն նաև առանց լաւ ուշացրութեան իմաստից . Ահա ասոնք են հոմերական տողերն և բառերը՝ որ թափառական կը պարուին մեր գրոց մէջ , և որոնք երբեք չեն ձևացած միաձյշլ մարմին մը . և ինչպէս կրնային ձևանալ այշափ զանազան գրիչներէ եւած տողերն . Եթէ գտնուէին հայ Պիսիստրատեանք ալ՝ կարող չէին այս մարմինը կազմել . որ իրաւոցնէ անկերպարան խաւար և բաւիլ մընէ : Բայց այս տողերն ու օրինակները հօս դնենիս ուրիշ պատճառ մը ունի , այն է քննել ու տեսնել թէ այդ տողերուն մէջ կրնայ արգեօք ծածկուած ըլլալ նորօրինակ չափոյ ու տաղաչափութեան դրութիւն մը , որ ցարդ մէկը տեսած չըլլայ , և սակայն նախնեաց ծանօթ ու մեզ անծանօթ ու անիմանալի մնայեր է : Ումանք Դիոնեսիսով թրակացւոյ քերականութեան վերջի գուլիսները կարգալով՝ համարեցան թէ հայերն ալ երբեմն ունեցեր են իրենց ամսնակաւոր կոչուած տաղաչափութիւնը , օտար ամեննեին հայկական չափուց զուգախառնութենէն . վասն զի ամսնակաւոր կը կոչուի այն տաղաչափութիւնն՝ որ հաստատուած է երկայն ու սուղ վանկերու վրայ , ինչպէս է յոյնն ու լատինը , և որոնք յանգի զաղափար չունեին . Հիմկու հիմայ դուրս թողալով դիսնիսեան քերականութեան դրութիւնը , աեսնենք թէ բուն հին նախնիկ ինչ ոճ բռներ են իրենց քերթութեանց մէջ . հարկաւ սյս բանիս լցու տուողը մեզ՝ Շարակնոցն է , այն գեղեցիկ մատեանն , որուն մէջ ոչ միայն հայ հանճարներու մրցումն կ'երևայ , այլ նաև յոյն ու ասորի հարց պարզ ու ընտիր նմաննութիւնք : Արդ անոր մէջ կը տեսնենք , որ իրաւոցնէ որչափ հին հեղինակ է շարագրողն կամ քերթողն , անյանգ տաղաչափութեամբ է , ինչպէս յսոյնն , և խառն կամ բարեխառն չափերով զուգեալ . օրինակ իմն՝

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ .

Հովիւք երեխն ընդ հրեշտակ՝ տան աւետիս աշխարհի ...

Ուրախացիր ուրբրուկի գարբիելի աւետեգք ,

Ար քարոզեաց ըզզալթւստ արքայի տեսանն ՚ի յերկնից ....

Ահաւոր ես թագաւոր քրովիրէական ձայնիւ օրհնեալ ,

և յերկնին ՚ի յերկնի և յամենայն ժամանակի :

Ես զարհուրեալ եմ և դողամ յորժամ լրսեմ ըզձայն փողոյն ,

Որ տաղնապաւ կոչ զաղինս ՚ի մեծ ահեղ օր ատենին .

Զի չարաշար մնաւ ընդ իս ամենամելզըն սատանայ ,

եւ կարելէր զիս արարեալ հանեալ ընկեաց (զիս) յանմահ փառացն .

Դառնադիմն չար պատրաստեաց ըզտարտարմս գեհենին ,  
Եւ ըսպառնայ մելլաւորիս այրիլ ՚ի հնոցըս կայծականց :

Ի յայտնին քան զանճք հնագոյն և ճարտարագոյն տողեր չենք յիշեր , ու բոնց յետին վեց տողեն Մանդակունւոյն անուամբ կը յիշուին , և այլքն Մովսիսի խորենացւոյ և Ս . Սահակայ . ահա յայտնի կը տեսնուի որ ամենեին յանգաւորութեան երեսոյթ չունին , այլ և ոչ ամանակաւոր գրութեան մը ստուեր . յորում կը ստիպուի քերթողն ըստ երկարութեան և սղութեան վանկից բառերու արոհումն ընել , որ այն ալ երբեմն բայց ըստ դիպաց . տեղ տեղ ներելի եղեր է մեր նախնեաց գործել , ինչպէս Ս . Հոփիսիմեանց կանոնին մէջ կ'երգէ Հայաստանեաց եկեղեցին՝

Լըմկանքը և քերանքը զարեան վըտակսըն հոսեցին ,  
Խորհըրդոց ոչ խոտորումն և ոչ փոխադրութիւն բարուց :

Բայտ այսմ բոլոր Հոփիսիմեանց կանոնին օրհնութիւնն անյանգաւոր տաղայի գործութիւն է , խառն և զանազան չափերով , ըստ ճաշակի քերթողին և երաժշտական գործեաց : Կան դեռ քիչ չաս նմանագոյն տողեր , յորուշշշտագրութիւնն կամ վերսաստութիւնն եղած ըլլայ ըստ ամանակաւոր քերթութեան կանոնաց , բայց քան զայս աւելի որոշ տող չկրցանք գտնել , յորում չկարենանք ուրիշ մեկնութիւն մը տալ չափուց համբանքին . օրինակ իմն՝

Ծագումն հրաշակի որ անյայտ էր ՚ի մէնջ  
և բանն հայրական անըմբբռնելի :

Ծագումն հրաշագործ որ ՚ի կուսէն ծագեցաւ  
ճառագայթելով զարարածս ամենայն :

Զոր կրնանք՝ ըստ գերազանցութեան նոյն կանոնին շարսկանաց՝ համրել և տրուհել 2 , 3 , 3 , 3 , և այլն . բայց կրնայ ալ աւելի հաւանօրէն մեկնուիլ և տրոհուիլ 5-5 կամ 5-6 : Խակ նախսրնթաց Ս . Հոփիսիմեանց կանոնին տողերն ուրիշ մեկնութիւն մը ամենեւին չեն կրնար վերցնել , վասն զի կանոնաւոր տաղաչափութիւն ըլլալով միշտ կը չափէ 3-4-4-4 , գիշ անդամ խառնելով ուրիշ փոքրիկ դանազանութիւն մը : Բայց սակայն ով կրնայ այս մէկ կամ երկու օրինակներով ըսել թէ ուրեմն ամանակաւոր զրութեան ընդունակ ըլլայ հայկական լիզուն : Անցեալ դարուն հայուս գերմանացի մը հմտացած հայ լիզուին շարադրեց քերականութիւն մը , զոր կոչեց « Արամեան լեզուին գանձ » . այս գրքիս մէջ նախինը համարձակեցաւ հայկական բառերու երկարութիւնն և սղութիւն ընծայել մասնաւոր զիսով մը , զոր մերժելու չաս աշխատութիւն կարեոր չէ : Վասն զի իրենն ալ , ինչպէս ամեն նոյն կարծեաց հետեղներուն հիմն դիսնեսիսիք քերականութեան վերջին է , զոր լուծելու ժամանակ՝ կը մերժուին նաև իրենց կարծիքն :

Դիսնեսիս թրակացին իր քերականութեան վերջերը կը խօսի , ինչպէս ընական էր , յոյն լեզուի տաղաչափութեան կանոնաց վրայ , որ կը ձևանայ և կայցած է , ինչպէս ամեն մարդ գիտէ , երկար և սուղ վանկերու վրայ . և որոնք ըստ զանազանութեան չափուց զանազան անուններ ալ ունեցեր են : Արդ հայթարդմանին ալ նոյն զրոց մէջ գտածը պարզմտութեամբ թարգմանած է . և

<sup>1</sup> Joh. Joachimi Schröderi, Thesaurus linguae Armeniacae antiquae et hodiernae. Amstelodami. Anno Mense Chr. MDCCXI, Armenorum MCLX. — Prosodia armenica, caput primum, de quantitate syllabarum. 221. de pedum constitutione, 224.

ոչ երբեք այդ լսածներն 'ի գործ գրուած են, ոչ նոյն գրոց մեկնիներէն, ոչ նոյն ժամանակակից անձանցմէ և ոչ 'ի հետագայից: Բւրեմն հասարակ վանդի վրայ խօսելով երեք տող օրինակ մէջ բերած է մեր անուանի քերականն՝ երեքն ալ Հոմերոսի քերթուածներէ. որ են.

« ինձ բնաւ կո ոչ դու իրիկ պատճառք, արե, այլ աստուածքն<sup>1</sup> »:  
 « Պատրոկլէ, ինձ հիմիս կարի յոյժ սիրեցեալ անձին<sup>2</sup> »:  
 « Զնեսաոր ոչ խարեաց խօշիւն թէպէտ և յումպ էր<sup>3</sup> »:

Ներեն մեզի ընթերցողք, թէ համարձակինք հարցընելու թէ այդ լեզուն ավ կը հասկընայ, ո՞ր հայ ականջը, թող թէ ներդաշնակութիւն մը տեսնէ անոր մէջ. և այդ տողերն այլշտի հմտից գործ կ'երևայ, որ կրցեր է ժամանակակից մեկնիւ մը երրորդ տողեն խօշիւն բառը խալոյ մեկնել (որովհեան խաչիւն կը դրեն հիներն), և ըսել յայտնապէս թէ և Մագիստրոս որ զմեկնութիւն քերականին շարադրեաց առ միմեանս, այսպէս եղեալ է. թէ տայր նմա ըմպելի խաչելոյ իրի ջուր զոր ասէր թէ սեաւ թէ ոչ է գինի, այլ խաշոյ : Այսպէս մեկնիչներն իրարմոնք կը լուսաւորին: Եւ յիրաւի եթէ այսպիսի իմաստներով Հոմերոս մը թարգմանուէր՝ շատ ծաղրական քերթութիւն մը կ'ունենայինք այսօր մեր մատենագրութեան մէջ, թէպէտ և քաջն Մագիստրոս հանգիսանալիք այս ասպարիզին, որուն գրչին կարովլութիւնն ուրիշ թարգմանութիւններով արդէն ծանօթ է մեզի: Ասոր քով զնենք նաև չափերուն անուններն, զոր հնարած են մեր նախնիքն 'ի Յունաց առնելով՝ ոչ բառերը, այլ նոյն բառերուն զօրութիւնը. Համբոյ (զզ. spondée). Մեծավերջ (iambe). Մեծասար (trochée). Անգայտ (pyrrhique). Ստեղն (dactyle). Վերջատանջ (anapeste). Քողաքորք (amphimacre). Քողազտ (amphibraque). Հաւեղ (antibacchique). Աւարտեղ (bacchique). Ներգե (tribraque). Սոնք (molosse): Աւելորդ կը համարինք հոս ասոնց սահմաններն նշանակել, թէ ո՞րն ո՞ր չափի հսմար իր գործածուի, որոնք արդէն 'ի բառզիրս նշանակուած են. Այս է քերականութեան նշանակածն. բայց ան կէ գուրս ուրիշ տեղ մը ասոնց նմանութիւն մը չգտնինուս պատճառաւ՝ վստահարար կ'ըսենք թէ միայն ինքնածին կամ լսա ևս ըսենք մտացածին գաղափար մ'եղեր է այդ մեր նախնիներէն ոմանց՝ քիչ հայրենասիրաց և հայերէն ճաշակի ուսուցչաց. բայց և հակառակաւ կը տեսնենք որ նոյն քերականութեան մեկնիցն իրենց մեկնութեան մէջ նոյն օրինակները չեն գործածեր, այլ սովորական հայկական չափը. և ուրիշ մ'ալ թարգմանած է Հոմերի ուրիշ գող մը բայց հայ կական ճաշակով՝

« Եւ մակագրեալ իմ այժմ զոտին քոյ գարշապար՝ ունայնս պանծաս »<sup>4</sup>.  
 կամ՝ ըստ բուն քերականութեան թարգմանին,  
 « Եւ զրեալ իմ զոտին այժմ զքոյ գարշապար, ունայնս պանծաս »<sup>5</sup>:

Բայց եթէ վայրկեան մ'ալ համարինք թէ այդ քերականութեան ըսածներն կանոն ըլլան, ինչո՞ւ նոյն ժամանակի անձինք կամ յետագալք չեն գործած.

1 Οὐτὶ μοι αἰτίη ἔσσι θεοῖ νῦ μοι αἰτίοι εἰσι.  
 2 Πάτροκλε, μοι δειλῆ πλεῖστον κεχαρισμένε θυμόδ. .  
 3 Νέστορα δ'οὐκ ἐλαθεν ιαχή, πίνοντα περ ἔμπτης.  
 4 Νῦ δε μ'ἐπιγράψχες ταρσόν ποδός, εὐχεαὶ αὔτως.  
 5 Ηξα նոյն տապը գրեթէ անայտայլիք պահած է Հոմերի իլիականին արդի անմահանուն թարգմանիչն, միայն իմաստին վրիպակը ուղղագրելով.  
 « Արդ զոտին իմց զընեալ քո զգարշապար՝ ունայն պանծաս » :

ծած ամենեին։ Վկայ ըլլայ մեղ Գրիգոր Մագիստրոս և իրմէ վերջը երդնկացին Յովիշաննէս, քան զորս հմուտ քերական չէ ունեցեր մեր ազգն։ Մագիստրոս կարդացած է հոմերական քերթուածները, գիտէ ու կը ճանչնայ մեր յիշած քերականութիւնը, բայց իր քերթուածոց մէջ առղ մը չկայ որ բատ յոյն կանոնի տաղտաշինալ ըլլայ։ Իսկ իր փոքրիկ բանաստեղծութեան համար, զոր գրած է « Յաղագս խաչնշան դաւազանին, զոր բնծայեաց Տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսի », և որուն սկզբնաւորութիւնն է,

« Բնծայեմ քեզ տարեկան նորոյս հասեալ ձեզ բարութեան  
Պատկըս քաղցրութեան ամիս եկեալ պարառութեան »,

այն քերթուածն հետ դրկած է առ կաթուղիկոսն մանր տեղեկութիւն մաալ բանաստեղծութեան արհեստին և նոյն տեղ գործածուած չափին համար, « որ ընթերցողաց կարծել տայ թերես թէ յունական չափերն ակնարկէ և իրաւցընէ սույոդ կ'ըլլար այս կարծիքն՝ թէ տաղաչափութիւնն ալ առջևնիս չունենայինք։ Նախ փոքրիկ մաս մը դիսնիսեան քերականութենէն դնելով։

« Հագներգութիւնս այս ոչ ըստ որում հագներգութիւն է մասն քերգածաց, ներառեալ ստորոտութեամբ։ և ոգեալ է հագներգութիւն ՚ի հագնելոյ կարկատուն բան։ և կամ ՚ի սարդենի մահակէ<sup>1</sup> պար գոյով երգել զհոմերական քերգածան ». Կ'անցնի եաքը բացատրելու իր շինած տաղաչափութեան կանոնը և դժուարութիւնները, և կերպով մը կ'ըսէ թէ սակաւոց միայն կարողութիւն է մոնել ու գատել այդ քերթածը։ « Ա.Ա. տաղ է հոմերական (իր շինածին համար կ'ըսէ որ կը վերջանայ միշտ ան, ան) քաջ ոլորեալ, և սա տաղ զիւցազնական չափաբերեալ ըստ Ելլենացւոցն ։ Իսկ ըստ Արաբացւոցն կըսեալ և բաղկացեալ է եռատամնեայ, և երից քառից միոյ քուէի։ և շարամանեալ ամանակօք երկարացեալ քսան և չորից, անդուսա բերելով և զոտքն պարզ երկուասան, զի մի պարէտն տրովացի հարեալ որպէս զդիոմիդեանն զոտին իմ գարշապար, զմերովս ծիծալիսցի արութեան գործառնութեամբ։ քանզի ոյնք քաջաց է, և բերէ քաջ ոլորակս այս զինի բաղմանանակացն աւարտեալ մեծամեջութեամբ, վեցանկեամբք յանգաւորեալ քառիւք ձայնաւորոք, ոյիւ, հիշնիւ, ելիւ, այրիւ, իսկ երկուս բաղաձայնիւք բոյիւ, նոյիւ։ և յօդաւորեալ է նոյիւ, իսկ բաղվսեցեալ բոյիւ, փաղառութեամբ ելիւ, այրիւ, և վարատմամբ ոյիւ, հիշնիւ։ միոյ երկամանակաւ, և միոյ սիիւ, և յերկուց ձայնորդաց ։ իսկ շարակայացեանն՝ թէ քերդողապէս որ նկատեսցէ, ՚ի քառից տասանց չափաբերեալ դացի ։ բայց ոչ է ինձ սակաւ ինչ ներորամախսնութիւնն, սակս բաղազանութեան, որ ՚ի սմա մակացութիւնն ։ Քանզի ՚ի թուականութենէ և յերածշականութենէ և յերկրաչափութենէ և յաստեղաբաշխութենէ շարաբարձեալ ունի յինքեան . . . »։ ի՞նչ կ'իմանայ ուրեմն Մագիստրոս Ամանակ, Մեծավերջուրիւն, և այնչափ երկայն վարդապետութեամբ։ յայտնի է որ միայն յանգաւորութեան կանոնը կը ցուցնէ, զոր Հայերն յԱրաբացւոց փոխ առած են, և այնչափ մեծ յարդ տուած, ինչպէս վերը ըսկնք, մեր հինքն ու նախնիքն յանգ չէն զիտեր, ինչպէս յօյնն ու լատինն ։ բայց յետ ժամանակաց, ինչպէս կը վկայեն նոյն ինքն Մագիստրոս և երզնկացին, յԱրաբացւոց սորվեցան մերքն մէկ վերջաւորութեամբ հազարտողեան ուստանաւորներ շարագրել, այն ձանձրափի միակերպութիւնն որ հինգերորդ վկացնելու տողէն կը սկսի յոդնեցնել զընթերցող։ և թերես նոյն յանգն ըլլայ զոր մերքն կ'յիս կ'անուանեն և կաֆայ կամ կափայ, որուն համար կ'ըսեն թէ Յոյնք չունին և Արաբիկն ունին։ Արդ Մագիստրոսի վարդապետութիւնն ոչ է

1 Այս ստուգաբանութիւններն ըստ յոյն բառին է, որ է քաջապահ։

ամանակաւոր տաղաչափութեան գրութիւն մը, ըստ հոմերական քերթուածոց, այլ պարզ ուրեմն, յանդաւորութիւնը, զոր ինքը վերոյիշեալ քերթութեան մէջ կը գործածէ, երբեմն եւսն յանդով բարեխառնելով. վասն զի ըստ Մագիստրոսի՝ որքեան երկայն յանդն կը պարունակէ շորս ձայնաւոր ու և և ա, և երկու բաղաձայն՝ թ, և. և վերջին զոր կը կոչէ յօդաւորեալ, և թ՝ բաղիսեցւալ, վասն զի ու վանկին վերջացնելով շեշոյը՝ թ տառին ուժով կ'անցնի եւսն վանկի վրայ, Ռւրեմն չի ճանչնար Մագիստրոս մեր Աւանակաւոր դրութիւն մը, նմանապէս և ոչ երգնկացին որ կարդացած է բոլոր իրմէ առջի Քերականերն, թէպէտ տեղ մը օրինակ կու տայ Հոմերոսէն Համբոյր ոտին այս տողը, անանունէ մը մէջ բերելով.

Շարժեն զասպար քաջամարտիկը առ զօրաւոր գործ, ընդ օդաթուիչ այսոց գումարտակ զարթուցեալ, անշարժ արձան սէրոց (կամ սէրոց?) ընձեռիլ բալ ձողաց :

Ահա հոմերական տողերն՝ զոր ջանացինք նախնեաց զանազան գրքերէն ժողուել ՚ի զբօմանս բանասիրաց, և եթէ ոմանց հետաքննելի համարուին՝ կրնայ գտնել զեռ ատոնց նման շատ տողեր՝ զոր մենք կամաւ դուրս ձգեցինք, վասն զի չուզեցինք անիմանալի բաներով ծանրաբեռնել այս հաստուածք: Բայց միանգամայն այս ալ ըսենք՝ որ եթէ մէկն ուզենայ օդտուիլ՝ կրնայ միայն բառից թարգմանութեան համար, թէ ինչպէս կը դարձնէլն մեր հազըն դիցաբանական բառերը, և անօգուտ կը համարինք դեռ պնդել թէ Հոմերական երկու յաւերթական ֆերթուածներն ՚ի հայ թարգմանուած ըլլան, և կարենայ յուսաւ մէկն որ գետնափոր տեղերէ և ստորերկրեայ անձաւներէ՝ ուսկից ամեն աշխարհք հիմայ իր պատմութիւնները դուրս կը հանէ՝ այս գանձն ալ գտնէ Հայոց ազգն, կամ թէ պատմութիւնները գոնէ միթին անկիւններէ ու խորչերէ: Որուն անկարելիութիւնը ցուցի նելու համար բաւական են, յուսանք, այսչափ ըստածնիս և օրինակներն ։ Բայց ալ աւելի օտար մոտածմունք կ'ըլլայ այդ ամանակաւոր տաղաչափութիւն կոչուած գրութեան օրինակներ պրատել ՚ի գրոց նախնեաց, որուն զաղափարն իսկ իրաւցնէ ցնորական եղիներուաքալ մը համարելու է հայ մատենագրութեան մէջ:

Հ. Արօէն Սուսքնաւ

